

ՀԻՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

Մ. Հ. ՄԻԽԻՔԱՐԱՆ

Նախաճառական գիտության դեռևս չբացահայտված առեղծվածներից է «Հյուսիսսփայլ» ամսագրում տպագրված նամակներից մեկի հեղինակի ինքնության խնդիրը¹։ Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց ստորագրությամբ՝ Կոմս էմմանուելին ուղղված այդ նամակի հեղինակի իսկության վերաբերյալ կասկածներ են հայտնվել նույնիսկ 1860 թ., նամակի տպագրությունից անմիջապես հետո, բայց վերականգնել ճշմարտությունը այդպես էլ չի հաջողվել։ Սարգիս Վարչամյանցի ինքնության հարցով, արդեն մեր օրերում, 1948 թ. լրջորեն դադարվել է Միքայել Նախաճառյանի երկերի լիակատար ժողովածուի խմբագրությունը։ Հատուկ ուշադրություն դարձնելով «Նամակում» բարձրացված հարցերի, դրա լեզվի և ոճի առանձնահատկությունների, պոլեմիկական ուղղվածության վրա, խմբագրությունը Վարչամյանց աղջանունը համարել է Նախաճառյանի գրական կեղծանունը և «Նամակը» զետեղել մեծ հրապարակախոսի երկերի ժողովածուի երկրորդ հատորում։

Տարիներ անց, սակայն, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուդան Նանումյանը «Մի կարևոր փաստի վերականգնում» հոդվածում սխալ համարելով Նախաճառյանի «Երկերի» խմբագրության ենթագրությունը, փորձեց հաստատել նամակագիր Վարչամյանցի հեղինակային իրավունքը²։ Այսպես՝ հոդվածագիրը հայտնում էր, որ Սարգիս Վարչամյանց անուն-աղջանունով գործիչ իսկապես եղել է իրականում, ապրել է Բաքվում, զբաղվել աղգասիրական, լուսավորական գործունեությամբ, և իր հետաքրքրասիրությունների բերումով և զարգացման աստիճանով միանգամայն ի վիճակի էր նման մի նամակ-հոդված ուղարկելու «Հյուսիսսփայլի» խմբագրությանը։

Ռ. Նանումյանի հաղորդումը նույնպես առարկության հանդիպեց։ 1981 թ. «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրված բանավիճային մի հոդվածում մենք այն համոզմունքը հայտնեցինք, որ Նախաճառյանի «Երկերի» հրատարակիչները բոլոր հիմքերն ունենին «Նամակը» զետեղելու հատորում։ Ինչ վերաբերում է Նանումյանի հոդվածում վկայակոչված փաստերին, ապա, մեր կարծիքով, խնդրո առարկա հոդվածի համար հավանաբար հիմք էր ծառայել իրական Վարչամյանցից ստացված ինչ-որ թղթակցություն, որը խմբագրությունը հիմնովին վերափոխելով, դարձրել էր հակառակորդների դեմ գրված բանավիճային հոդված³։ Պատահական չէր ուրեմն, որ «Նամակի» հրապարակումից անմիջապես հետո Մոսկվայից ենք ստացել այդ փաստաթղթում նկատեցին Կոմս էմմանուելի՝ «Բազմազգ հայտնի հեղինակի», մասնակցությունը գործին։ Խմբագրության նման ձեռնարկումը մենք տրամաբանական էինք համարում, հաշվի առնելով այն թշնամական մթնոլորտը, որ ստեղծվել էր «Հյուսիսսփայլի» խմբագրության շուրջը, ամսագրի առաջին իսկ համարի տպագրությունից հետո։

«Հյուսիսսփայլի» առաջին համարը բացվում էր «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային առաջաբանով, որը Նախաճառյանի նախահյուսիսսփայլյան շրջանի աշխատություններում արժանի զաղափարների ընդհանրացված

¹ «Նամակ» (ստացված Բաքվից «Հյուսիսսփայլի» անունով), Փայտակարան, 1860 թվականի օգոստոսի 12-ին» (Հյուսիսսփայլ, 1860, № 11, էջ 384—396)։

² Տե՛ս Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1964, № 3։

³ Մ. Հ. Միքայելյան, Նորից Սարգիս Վարչամյանցի «Նամակի» առթիվ (ՊԲՀ, 1981, № 3)։

դիտական շարադրանքն էր: Այստեղ նա կրկին հայտարարում էր նոր ժամանակների պահանջներին համապատասխան աշխարհաբար լեզվի կիրառությանն անցնելու իր վճիռը, բացահայտում 1860-ական թվականների ազգային զարթոնքը խթանող գործոնների դերը և նշանակությունը: Օգտվելով նոր տարվա շնորհավորական խոսքի հնարավորությունից, «Հյուսիսսահայի» խմբագիրը կենդանի գործունեության էր կոչում ազգայիններին, շնչավորում Հայրենիք հասկացությունը: Քաղաքացիական ազնիվ պաթոսով տոգորված այս անկաշառ խոսքը հայությանն էր հասցնում այն միտքը, թե կար Հայրենիք, որին պարտավոր էին ծառայել հասարակության բոլոր անդամները: Նույնիսկ ժողովրդին դիմելու նոր կերպը՝ «Ազգի անդամներ», «Հայազնյա մարդիկ», «Մեր պատվելի եղբայրք և ընկերք» արտահայտությունները, ժամանակի ոգին խորհրդանշող և ազգի անդամների քաղաքացիական արժանապատվությունը շեշտող նորություններ էին:

Խորապես համոզված լինելով, որ խավարամտներին այլևս չի հաջողվի կանգնեցնել կյանքի առաջընթացը, Նազարյանն ազգասեր գործիչներից պահանջում էր գործել վստահորեն և ջախջախել «խավար վիշապի գլուխը»: Սպասվելիք անխուսափելի պայքարում հաղթելու առաջին գորավոր զենքը Նազարյանը համարում էր ժողովրդին հասկանալի և կիրթ աշխարհաբարը, առանց որի անհնար էր գտնում ամենօրյա հաղորդակցությունը ժողովրդի հետ, ինչպես և հայ նոր գրականության ստեղծումն ու ազգային կյանքի նորոգությունը: Առաջինը մեր իրականության մեջ Մտեփանոս Նազարյանը հրապարակում է գրական աշխարհաբարի մշակման համարձակ մի ծրագիր, ըստ որի՝ մերժելով հանդերձ գրաբարի գերիշխանությունը նոր լեզվի վրա, նա միաժամանակ անընդունելի էր համարում անվերապահորեն որևէ բարբառի դիմելու ճանապարհը: Այս առիթով նա գրում է. «Մեր սիրտը վկայելով, որ գոհ՜իկ ժողովրդի վայրենացած լեզվով ամենևին անհնար էր ուսումնա տալ ազգին, ընտրեցինք մի ընդհանուր ոճ խոսակցության, ինչքան կարելի էր, հեռի պահելով մեղ տեղական առանձին բարբառներից, հետևելով միայն այն առավել ընտիր աշխարհաբար հայախոսությանը, որ հայաբնակ քաղաքներումը Ռուսաստանի, լսվում է ընդհանրապես»⁴: Սակայն նա բոլորովին չէ, որ հրաժարվում էր գրաբարի հարուստ ժառանգությունից: «Մեր հայոց գեղեցիկ աշխարհաբար լեզուն, — գրում է նա, — պիտո է յուր փոքր ի շատե անարատ դրուկյան մեջ հառաջ գնա, մի ոտքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերա, օր ավուր լցուցանելով յուր պակասությունը հին լեզվի ճոխ գանձարանից»⁵: Այս պարագայում նա հայկաբաններից պահանջում է պահպանել չափի զգացումը և գրաբարից վերցնել ամենամանհրաժեշտը միայն:

«Հայկական լեզվի խորհուրդը» հոգվածը, որ անցյալ դարի 60-ական թվականների հայ հասարակական կյանքի վերափոխման, եվրոպական քաղաքակրթության օրինակով դրա նորոգության մի բացառիկ կարևոր մանիֆեստ էր, սրերով է ընդունվում ժամանակի հետահայաց գործիչների կողմից: Կարճ ժամանակից մթնոլորտն ավելի է շիկանում, երբ «Հյուսիսսահայի» էջերում երևավում են Նալբանդյանի, Նազարյանի և ամսագրի մյուս աշխատակիցների թե՛ ընթացիկ հոդվածները և թե՛ պատասխանները բանավիճողներին: «Մեղու Հայաստանի», «Ծռաքաղ», ապա նաև «Մասյաց աղավնի» պարբերաթերթերում տպագրվում էին Մտեփանոս Մանդինյանի, Մսեր և Զարմալը Մսերյանների, Մովսես Իսահակյանի հոդվածները: 1860 թ.-ից իր հեղինակավոր խոսքն է ասում նաև Գաբրիել Ալվադովսկին: Շուտով բանավիճային հրապարակի տիրակալն է դառնում մոսկովաբնակ բանասեր Հովսեփ Զեքեղյանը, որն իր մարտական հոդվածներով ողողում է ժամանակի թերթերը, չխորշելով նաև սադրանքների և անվայել մատնությունների միջոցներից:

⁴ Հյուսիսսահայի, 1858, № 1, էջ 31:

⁵ Նույն տեղում, էջ 34:

Շատ հետաքրքրական է և ժամանակի համար բնորոշ, որ «Հյուսիսսփայլի» դեմ սկսված բանավիճալին պայքարը զուգակցվում էր նաև այսպես կոչված բանաստեղծական զեղումներով, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ հայհուլանքներ՝ չափածո ձևի մեջ, սպառնալիք և կամ հակառակորդին ոչնչացված տեսնելու անմիտ ցանկություն: Վերոհիշյալ պարբերաթերթերը, ի դեպ, ապագա ընթերցողներին «հիշատակ» են թողել իրենց ողորմելի երազների, տեսիլների, չափածո և արձակ առակների մի պատկառելի հավաքածու:

Ստեփանոս Նազարյանը հարկադրված էր խմբագրական ընթացիկ գործերի հետ մեկտեղ պատասխանել համաճարակային բնույթի այդ հոգվածներին, թեև իբրև ճշմարիտ հրապարակախոս նա արժանապատվությունից ցած էր համարում իջնել մինչև վերը հիշված տեսիլների ու երազների տնարույս հեղինակներին՝ լրատասխանելու մակարդակը: Նազարյանի և Նալբանդյանի հոգվածներից բացի, «Հյուսիսսփայլում» տպագրվում էին նաև ամսագրի խմբագրությանը մոտ կանգնած մի շարք գործիչների հոգվածներն ու բողոքի նամակները (Սեդա Ալեքսանդրյանց, Հակոբ Սերոբյանց, Մարտիրոս Սիմոնյանց): Այս շարքի հոգվածագիրներից էր դիտվում նաև Սարգիս Տեր-Միքայելյան Վարշավյանցը, որի «Նամակ»-հոգվածը դարձավ բանավեճերի առարկա: Արդ, անդրադառնանք այդ «Նամակի» հեղինակի ինքնություն խնդրին:

«Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում վերը հիշված երկու բանավիճալին հոգվածների տպագրությունից տարիներ անց, իրերի բերումով ծանոթացանք «Արձագանք» շաբաթաթերթում տպագրված մի մահախոսականի հետ, որն սկիզբ դրեց նոր որոնումներին: Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի հրատարակիչ Գևորգ Աբովյանի գործընկեր, հայ մանկավարժ և հասարակական գործիչ Հովսեփ Փոնդոյանի մահվան առիթով գրված այդ մահախոսականում ասված էր. «Վերջ Հայաստանին» տպագրվելուց հետո Փոնդոյանը կողմնակի կերպով օգնում էր հայր Մանգինյանի «Մեղու Հայաստանի» լրագրին և համեստաբար պահելով յուր անունը, նա մի շարք հոգվածներով (1858 և 1859 թվականներին)՝ հերքեց «Հյուսիսսփայլի» մեջ երևեցած այն կարծիքը, որ իբր թե մասնավոր անհատները կարող են ժողովրդի համար որևիցե լեզու ստեղծել: Փոնդոյանը այս խնդրից դուրս չէր խառնվում «Մեղուի» և «Հյուսիսսփայլի» մեջ հարուցած բանավեճին, բայց յուր վերոհիշյալ դրվածների մեջն էլ արդեն բավականին հմտություն ցույց տվեց, ամենայն քաղաքավարությամբ առաջ բերելով անհերքելի փաստեր օտար գրականությունից: Նա անմիջապես հեռացավ ասպարեզից, երբ հիշյալ երկու թերթերի բանավեճի չափազանցության հասավ⁶:

Փոնդոյանի հոգվածների որոնումները մեզ հանգեցրին հետևյալին. «Մեղու Հայաստանի» թերթի էջերում 1858 թ. նա տպագրել է երեք, իսկ 1860-ի սկզբին՝ մեկ հոգված: Առաջին երկու հոգվածները տպագրվել են «Մեղուի» 1858 թ. 29—30 և 36 համարներում և կրում են հոգվածագրի պայմանական անվան Մ. Ղ. սկզբնատառերը: Նույն շաբաթաթերթի դարձյալ 1858 թ. 48 համարում տպագրվել է երրորդ հոգվածը՝ Թովմաս Դավթյան ստորագրությամբ: Զորորդ հոգվածն անստորագիր է և տպագրվել է 1860 թ., 5—6 համարներում: Որ հիշյալ 4 հոգվածները պատկանում են միևնույն հեղինակին, այդ է ապացուցում ոչ միայն դրանց լեզուն, որն աչքի է ընկնում Թիֆլիսի բարբառի ինքնատիպ երանգավորումներով, այլև, որ շատ ավելի կարևոր է, հոգվածներում արժարժված խնդիրների տրամաբանական սերտ կապը⁷:

⁶ Արձագանք, 1883, № 28, էջ 400.

⁷ Միքայել Նալբանդյանի նրկերի լիակատար ժողովածուի (ԵԺ) երրորդ հատորի ծանոթագրություններում մենք թույլ ենք տվել երկու վրիպում: Խոսելով Մ. Ղ.-ի հոգվածների մասին, դրանց հեղինակ մենք համարել ենք Մարգարյան Ղազարին, որի անունը հիշատակված է խըմբագրության ծանուցումներից մեկում, իբրև շաբաթաթերթի աշխատակից: Այնուհետև, երրորդ հոգվածի հեղինակ ենք համարել Թովմաս Դավթյանին, որի հոգվածի մուտքի խոսքում ասված է.

«Քննություն» կոչված իր առաջին հոդվածում, որը կրում է «Պարոն Ստեփանոս Նազարյանցը և նորա գրավոր վաստակը» երկրորդ հիմնական խորագիրը, հոդվածագիրն իր նպատակն է համարում հայ գրականության մեջ սկիզբից աշխուժության կապակցությամբ քննարկել, ապա և միմյանց հետ հաշտեցնել մամուլի էջերում արտահայտվող կարծիքները, որոնք թեև հետապնդում են միևնույն նպատակը, բայց և կարող են դանդաղեցնել ընդհանուր առաջադիմությունը: Ինչպես պարզվում է նրա հոդվածներից, Մ. Ղ.-ին հուզող հիմնական խնդիրը աշխարհաբար գրական լեզվի մշակման նազարյանական ծրագիրն էր, որը նա միանգամայն անընդունելի էր համարում: Բուն հարցին անդրադառնալուց առաջ հոդվածագիրը փորձում է ներկայացնել Նազարյան-գիտնականի գրական վաստակը՝ նա այն միտքն է հայտնում, թե իբրև դասախոս և գիտնական ճանաչված Նազարյանը տվար է գրաբարի մեջ, իր «Այբբենարանում» նա մանուկներին խառնիխառն գիտելիքներ է հրամցնում, կազմում է բարդ բնագրեր և այլն⁸: Ազգի օգտի համար աշխատելու փոխարեն, Մ. Ղ.-ի կարծիքով, Նազարյանն «առավել ջանադիր է լինում յուր գիտության աստիճանը ցույց տալու ազգին, քան թե նրան մի կերպ օգուտ բերելու»⁹: Այնուհետև, արդեն քննության առնելով «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածում արծարծված խնդիրները, հոդվածագիրը խստիվ մերժում է բարբառները մշակելու և մեկ գրական լեզու ձևավորելու Նազարյանի ծրագիրը: «Նազարյանը պետք է ձեռ վեր առնի՝ աշխարհաբար լեզվի նորաշինությունիցը», ճանապարհորդի Հայաստանում, ուսումնասիրի բարբառները և հասկանա իր սխալները, հայտարարում է նա: Զարգացնելով այն միտքը, թե ժողովրդի լեզուն պատմության «կենդանի հիշատակ է», Մ. Ղ.-ն գտնում է, որ սխալ է՝ ընդունել միմիայն արևմտահայ և արևելահայ լեզուների հեռանկարային լինելը և պահանջում է հավասարապես ընդունել բոլոր դավառաբարբառների պահանջման և օգտագործման անհրաժեշտությունը: Չընդունել բարբառները, գրում է նա, կնշանակի «պատմությունը ուրանալ, աշխարհի մեջ եղած իրողությունները և նոցա ծանր-ծանր հետևանքները, որ մի անգամ հառաջացել են և ներգործում են այժմ, ոչինչ համարել, ջուրը ձգել, իսկ այդ խելացի մարդու գործ չէ»¹⁰: Ավելին՝ Նազարյանի այն հայտարարությունը, թե նա պետք է մշակի մի լեզու, որը հասկանալի լինի բոլորին, Մ. Ղ.-ն ծաղրում է, ասելով, թե այն չի դառնա հայոց լեզու, «այլ պարոն Նազարյանցի լեզու»:

«Բանաքննություն» վերնագրված իր երկրորդ հոդվածում Մ. Ղ.-ն անգրադառնալով Նազարյանի լեզվական հայացքներին, նրան կշտամբում է գրաբարից օգտվելու առաջարկի համար, գտնելով, որ «աշխարհաբար լեզվի խոսքերի նյութը պիտի առնվի կենդանի բառարանից, որ է՝ ժողովուրդը»: Ինչ վերաբերում է Նազարյանի այն կարծիքին, թե քանի որ բարբառները քերականություն չունեն, «էս պատճառով պետք է լեզուն ուղղած, կանոնի տակ գրած», ապա Մ. Ղ.-ն ամենայն համոզվածությամբ գրում է, թե խանգարումն այն չէ, որ այդ լեզուն հեռացել է գրաբարից, այլ այն, «եբր որ մէ մարդ մէ ինքնակույն պես դուս է գալի գրականության ասպարեզ ու սկսում է իրմէն օրենքներ հնարել, լեզուն ծռմռել»:

Պարոն Նազարյանցը խանդարում է հայոց լեզուն: Ափսոս, շատ ափսոս: Մենք ուրախ ենք գոնյա, որ ժողովուրդը չի սեփականում նրա հնարած քերականական ձևերը»¹¹:

«Այս օրերուն Օդեսայից թուղթ ստացանք գիտնական Թովմաս Դավթյանից, որով խնդրում է այս հոդվածը ժողովրդական լեզվի վերա հրատարակել «Մեղու Հայաստանի» լրագրի միջոցով»:
22/X—58, Օդեսա (տե՛ս Մխիթարյանի Նախնայան, Եժ, հ. 3, Ե., 1982, էջ 362—363):

8 Ստ. Նազարյան, Առաջին հոգեդեն կերակուր հայազգի երեխաների համար, Մոսկվա, 1853:

9 Մեղու Հայաստանի, 1858, № 30, էջ 232:

10 Նույն տեղում, էջ 239:

11 Նույն տեղում, № 36, էջ 287:

Նրորորդ հողավածում, որն իբր ուղարկված էր Օդեսայից և ստորագրված թուվմաս Դավթյան անունով, հեղինակը, կրկին քննության առնելով աշխարհաբար գրական լեզուն մշակելու խնդիրը, այն միտքն է հայտնում, որ այդ հարցի տեսարանները ռամենկին ծանոթ չեն ժողովրդի լեզվի հետ: Այստեղից էլ այն սխալ կարծիքը, դրում է նա, որ «իբր թե աշխարհաբար լեզուն չափեմեն դուս աղքատ է»: Թ. Դավթյանը գտնում է, որ այդ գործիչները վաղ հասակում մեկնելով օտար երկրներ, վերադարձից հետո չեն ծանոթանում ժողովրդի կյանքին և նրա կենդանի լեզվին: «Մոռանալով իրենց մայրենի լեզուն, ներանք սկսում են կամաց-կամաց ստեղծել նոր հայոց աշխարհաբար լեզու գրասարի ազդեցության տակ: Արա օրինակը կարող է լինել ու. Նաղարյանը»:

Հակադրելով Աբովյանին և Նաղարյանին, Թ. Դավթյանը դրում է. «Մեկի աղբյուրը աշխարհաբար գրելիս հիմիկվա ժողովուրդն է, մյուսի աղբյուրը հայոց գրաբար բառարանն է ու սեփական երևակայությունը... Աբովյանը ամեն ժամանակ իր գրություններում կոնսերվատոր է, պահպանող հայրենական սուրբ ավանդությունների, Նաղարյանը սրա հակառակ զայրացյալ ռադիկալ է, հենց կարծես տակն ու վերև է ուղում անիլ հայրենի սուրբ ավանդությունները: Նաղարյանը, շարունակում է Դավթյանը, ժողովրդին պարտադրում է իր բժշկական ծառայությունը, առանց ծանոթ լինելու նրա ցավերին նրա առաջարկած դեղերն են՝ «անվարավուրդ խոսալը, սաստիկ կշտամբանքը, ...հարալ հրոց հիվանդի վրա, գլուխ դանգ անիլ...», իսկ այս դեղերը միայն հուսահատեցնել կարող են հիվանդին¹²:

Դարձյալ դիմելով ռուս և օտարազգի գիտնականների ասույթներին, նա անընդունելի է համարում տարբեր բարբառների քերականական ձևերի նույնացումը: Միաժամանակ կրկնելով Մ. Դ.-ի հողավածում արտահայտված այն միտքը, թե լեզուններն օգնում են հասկանալու ազգի կյանքի և պատմության հանգամանքները, Թ. Դավթյանը եզրակացնում է, որ «լեզուն պատմության երևելի հիշատակարաններից մեկն է. նշանակում է՝ լեզվի խանգարիչը պատմության նյութերու ու աղբյուրներու խանգարիչ է»¹³:

Է՛լ ավելի մարտական է այս շարքի վերջին, անստորագիր հողավածը, որը հեղինակը հավանաբար գրել է նախորդ հողավածներում բարձրացված հարցերը ամփոփիչ եզրահանգման հասցնելու նպատակով: Այս է պատճառը, որ հարցադրումները կրկնվում են: Այսպես, նա առարկում է Նաղարյանի այն տեսակետին, թե տարբեր բարբառներից պետք է ստեղծել մեկ, մշակված, բոլորին հասկանալի լեզու: Դարձյալ պնդում է, որ գրականության զարգացումը պետք է տանել տեղական բարբառներով, քանի որ «մեր ժամանակը դեռ չէ հասել ընդհանուր լեզվի համար»: Այն միտքն է հայտնում, որ մեկ բարբառով դրված «Վերք Հայաստանի» վեպը հասկանալի է բոլոր ընթերցողներին, այնինչ, Նաղարյանի գրքերը չեն հասկացվում: Այնուհետև հողավածագիրը գրողներին խորհուրդ է տալիս ճարտասանական, փիլիսոփայական, վերացական գրվածքների տեղ գրել ժողովրդին հասկանալի վեպեր, բանաստեղծություններ, որոնք ժողովրդին ծանոթացնեն և՛ իրենց լեզվին, և՛ կյանքին: Բացի այդ, ի դեպ, հայտնում է այն արտառոց միտքը, թե «գրողները թող էնպես բաներ գրեն, որ մեր լեզուն կարողանա բացահայտել»: Այս դատողություններին հետևում են և այն մեղադրանքները, որ Նաղարյանը հնարավոր է գտնում նոր լեզվի մշակման ընթացքում օգտվել գրաբարյան լեզվաձևերից, երբեմն նաև եվրոպական բառերից, «իսկ թուրքի, պարսկի խոսքեր, որն որ մոտ երկու-երեք հարյուր

12 Նույն տեղում, № 48, էջ 380—381:

13 Նույն տեղում: Անկախ Փոնդոյանի նախորդ հողավածների հետ սույն հողավածի ունեցած բացարձակ նմանությունից, մենք անհնար ենք գտնում, որ երեք ամսվա միջոցում «Մեղու Հայաստանի» թերթը հասներ Օդեսա, այդ չաբաթաթերթի էջերում տպագրված ևրկու հողավածների հիմնախնդիրը. լուսաբանվեր մի նոր, ծավալուն հողավածում և ուղարկվեր Թիֆլիս ու դեռ հասցեներ տպագրվել:

տարի գործ են ածում հայերը, պարոն վարդապետը չէ հրամայում գործ ածել»¹⁴:

Հոգվածագիրն այնուհետև անուղղակիորեն հրապարակում է իր հիմնական նպատակը, որը մոտ է սպառնալիքի. «Մենք կատարյալ վարձատրված կհամարենք մեր գլուխը, եթե մեր խոսքերով մենք հորդոր կըլնենք մեր շնորհալի երիտասարդներին, որ նրանք ուշքենբը դարձնեն մեր ժողովրդական լեզվի վրա ու աշխատեն էս լեզուն հանել էս անվայել արհամարհանքից, որի մեջ որ գտնվում է պ. Նազարյանցի ու ուրիշների շնորհով»¹⁵:

Վերջին հոգվածում նկատվում են նաև անպատշաճ արտահայտություններ Նազարյանի հասցեին: Այսպես՝ անանուն հեղինակը գրում է, որ Նազարյանի լեզվագիտական հայացքները շատ ցածր են այն մակարդակից, որին հասել է եվրոպական գիտական միտքը շնորհիվ Վ. Հումբոլդի և Գրիմ Եղբայրների գործունեության: Այնուհետև նա, միանգամայն անվարան, Նազարյանին համարում է մեծամիտ, որն իբր «Հյուսիսափայլի» էջերում «իր գլուխը միշտ զովում է» կամ դափնյա պսակներ է բաժանում: Նա իրեն իրավունք է վերապահում խոսել բոլոր հայերի, հարուստների ու կաթողիկոսների մասին, բայց «ինչի՞ վրա է հաստատում էդ իրավունքը, մենք չենք հասկանում: Թե իրան խոր գիտությունվն է պարծենում, մենք գիտենք ինչ որ-որ է, ու շատին էլ հայտնի է, թե բոլոր նրա աշխատությունները խառնիխուռն դեպից ու դեպից հավաքած բաներ են ու թե մենակ նրան պատկանում են հայերի վրա մոգոնած շառերը»¹⁶:

Եթե առաջին հոգվածներին կարելի էր չպատասխանել, քանի որ Նազարյանի հակառակորդների հայհոյական ելույթների «համանվագի» մեջ դրանք քիչ մտահոգիչ էին, բայց վերջին հոգվածը ոչ միայն դուրս էր զալիս լրագրային հոգվածի պատշաճության սահմաններից, այլև որոշակի վտանգ էր ներկայացնում: Ինչպես ասվեց, հոգվածագիրն իր իսկ խոստովանությամբ ձուլտում էր «հայ շնորհալի երիտասարդներին» ուշադրությունը կենտրոնացնել բարբառների վրա և հասնել այն բանին, որ նրանք ժողովրդական լեզուն «փրկեն Նազարյանի և նրա համախոհների թանվայել արհամարհանքից»: Այս պարագաներում ահա, շնայած իր և Նալբանդյանի բազմաթիվ ելույթներին և հենց «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրալին հոգվածին, որում այս խնդիրները հանգամանորեն հիմնավորված էին, անանուն հեղինակի «ջանքերը» կարող էին խաթարել աղդեն ձևավորվող գրական լեզվի զարգացման բնականոն ընթացքը:

Սակայն, մեր կարծիքով, կար մեկ հանգամանք, որը Նազարյանին զրկում էր իր ընդդիմախոսի դեմ բանավեճ վարելու հնարավորությունից: Անշուշտ, նա չէր կարող չիմանալ, որ միմյանց հար և նման այդ հոգվածների հեղինակը Փոնդոյանն էր, ա՛յն Հովսեփ Փոնդոյանը, որը Գևորգ Աթիմյանի հետ քաղաքացիական սխրանք էր կատարել, հրատարակելով հաշատուր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպը և փաստորեն այն փրկել կորստից¹⁷: Անհուն սերը երիտասարդական տարիների իր Մեծ բարեկամի նկատմամբ և նրա անդերազանցելի վեպի լույս աշխարհ գալու երջանիկ իրողությունը բարոյական ծանրակշիռ գործոններ էին, որոնք, անկասկած, մեծ շրջահայեցողություն են պարտագրել Նազարյան-բանավիճողին: Փոնդոյանին չէր կարելի դասել լրա-

14 Նույն տեղում, 1860, № 6, էջ 44:

15 Նույն տեղում, էջ 46:

16 Նույն տեղում:

17 Հովսեփ Փոնդոյանը համալսարանական կրթություն ուներ և աչքի է ընկել իրրև մանկավարժ և հասարակական գործիչ: Նա, միաժամանակ, աշխատակցել է «Մեղու Հայաստանի» շարաքաղաքին և «Կուռնկ հայոց աշխարհին» ամսագրին: 1863 թ. այդ ամսագրի էջերում նա հրատարակել է երկու մեծարժեք պատմական աշխատություններ, Պեարոսդի Սարգիս Գլխանցի «Ժամանակագրությունը» և կաթողիկոս Հովսեփ Արղունյանի «Հիշատակարանը»՝ ծավալուն և փաստառատ առաջաբաններով:

գրային կոմիտեների այն «կորիֆեյներին» շարքը, ինչպիսիք էին Նազարյանի «Եան-նկուն» հակառակորդներ Ա. Արարատյանը, Ստ. Մանդինյանը և Հ. Չերքեզյանը, Ուստի, Նազարյանը նրան պատասխանելու խնդիրը լուծել է մեծատաղանդ հրապարակախոսի նախանձելի հնարամտությամբ: Օգտվելով Նալբանդյանի՝ Մոսկվայում գտնվելու առիթից, որը 1860թ. ամռանը կարև ժամանակով Պետերբուրգից ժամանել էր Մոսկվա և պետք է ուղևորվեր Կովկաս՝ էջմիածին, Նազարյանը նրա օգնությամբ կազմել է Վարչամյանցի «Նամակը»: Այսպիսով, մենք գտնում ենք, որ Նազարյանի և Նալբանդյանի կողմից ստեղծվել է նամակ-հոգված, որն իբր ստացվել էր Բաքվից, «Հյուսիսսփայլին» համակիր մի դործչից և որը, նրանց համոզմունքով, անհրաժեշտության դեպքում պատշաճ ըմբռնումով կվերաբերվեր կատարվածին: Հարցի պատմությունը, իրոք, հաստատեց, որ Վարչամյանցի նկատմամբ նրանց ունեցած վստահությունն անհիմն չէր: «Նամակի» տպագրությունից հետո Մսերյանները մի հոգված են հրապարակում նրա դեմ և կշտամբում, որ «Ճռաքաղի» վերաբերյալ իր ասելիքն իրենց հայտնելու փոխարեն նա դիմել է «Հյուսիսսփայլին»: Ի պատասխան այդ հանդիմանության, Վարչամյանցի բարեկամ բժիշկ Դավիթ Ռոստոմյանցը, որ միաժամանակ «Ճռաքաղի»՝ Շամախի գործակալն էր, մի նամակով Մսերյաններին հայտնում է, որ Վարչամյանցն այդ հոգվածի համար պատասխանատվություն չի կրում, քանի որ նրա ստորագրությամբ տպագրված նամակը, հետևապես և այդ նամակի թրառերն ու իմաստը՝ իրենք չեն: Ելնելով դրանից, Մսերյանները պահանջում են, որպեսզի Վարչամյանցը մամուլի էջերում հայտնի ճշմարտությունը: Վերջինս ուրեք նամակ չի հրապարակում և իր վրա է առնում Հ. Մսերյանի «Դարձված բանից» քննադատական հոգվածի հարվածները¹⁸:

Սակայն ի՞նչ հարցեր էին շոշափվում Վարչամյանցի «Նամակում»: Այդ «Նամակ»-հոգվածում առերևույթ քննարկվում էր «Ճռաքաղ» երկշաբաթաթերթի խմբագիրների լեզվական քաղաքականությունը, այն խնդիրը, թե աշխարհաբարն անգոսնող հայր և որդի Մսերյանները ի՞նչ մղումով են գրաբար հրատարակվող իրենց պարբերաթերթի լեզուն դարձրել աշխարհաբար, այն էլ այնպիսի մի խառնափնթոր գրաբարախառն աշխարհաբար, որը կարող էր վատ օրինակ ծառայել դեռևս լեզվական անհրաժեշտ պատրաստություն չունեցող լրագրողների և ընթերցողների համար: Վարչամյանցի կարծիքով, «Հյուսիսսփայլը» պարտավոր է հսկել և մյուս թերթերի լեզվի մաքրությանը, անաշուխոս ասել դրանց արժանիքների և թերությունների մասին: Նա միաժամանակ խնդրում է Կոմս էմմանուելին՝ տպագրել իր նամակը և համապատասխան ծանոթություններով զգուշացնել ընթերցողներին՝ հեռու մնալու «Մսերյանների մատենագրական հերձվածից»:

Վարչամյանցի «Նամակը» թե՛ բարձրացված հարցերի, թե՛ կառուցվածքի և լեզվաոճական առանձնահատկությունների առումով միաժամանակ կապվում է Կոմս էմմանուելի «Հիշատակարանի» հետ և մատնում դրանց հեղինակների նույնության փաստը: Այն գրված է Նալբանդյանի գրչին հատուկ երգիծական ոճով և փայլում է սրամտությամբ ու Մսերյանների լեզվական անհեթեթ հայացքները գլխովին ջախջախելու վարպետությամբ: Բայց այս, ինչպես ասացինք, «Նամակի» միայն երևութական կողմն է: Նամակի հեղինակը Վարչամյանցի անունից, կարծեք հենց այնպես, կողմնակի կերպով բարձրացնում է նաև իբր Վարչամյանցին հետաքրքրող, սակայն Փոնդոյանի հոգվածներում արժարժված հիմնական վիճահարույց խնդիրները, իսկ Ստեփանոս Նազարյանը օգտվելով իր՝ խմբագրի իրավունքից, տեղն ու տեղը տողատակի ծանոթություն ձևով տալիս է նամակագրին հետաքրքրող հարցերի գիտական, համակողմանի բացատրությունները:

Այսպիսով, ահա, խմբագրության կողմից ստեղծված «Նամակի» հիմնական նպատակն արտահայտվել է դրա ենթատեքստում, որը հնարավորություն

¹⁸ Տե՛ս Ճռաքաղ, 1860, № 9, 1861, № 13, 15, 20:

է տվել նազարյանին, իբր Վարշամյանցի դեմ վարած բանավեճի միջոցով հերքելու Փոնդոյանի անընդունելի հայացքները և մեկ անգամ ևս հիմնավորելու գրական աշխարհաբարի մշակման անհետաձգելիությունը, որն այդ պահին նա համարում էր «ազգի մեծակշիռ օգուտներինց մեկը»։ Այս հանգամանքն էլ պատճառ է եղել, որ «նամակը» զրկվել էր հոգվածի դասական միաձուլ կառուցվածքից և դառնար տողատակի ծանոթագրությունների իշխանությանը ենթարկված նորաձև մի տրակտատ¹⁹։

Նազարյանը և Նալբանդյանը Վարշամյանցի «նամակի» միջոցով ի լուր բոլոր ընթերցողների, առաջին իսկ պարբերությամբ, հաստատում էին «Հյուսիսափայլի» պատմական դերը և նշանակությունը՝ իբրև հայ նոր գրական լեզվի լինելության առհավատչյան, իբրև հայ նոր գրականության ստեղծման անմիջական և հզոր գործոն։ Այս իմաստով անսահման դիպուկ է ձևակերպված «նամակի» մուտքի խոսքը՝ գրված Կոմս էմմանուել-Վարշամյանցի կողմից։ Ահա այն.

«1858 թվականը արժանի է ոսկեդեն տառերով արձանագրվելու ամենայն բանասեր Հայկազնի հիշատակարանի մեջ։ Հայկական նոր գրականության պատմությունը այս թվականից պիտի սկսանի յուր առաջին շրջանը։ Այս թվականին ծնավ «Հյուսիսափայլ» օրագիրը։ Ոչ մի օրագիր ոչ մի ազգի մեջ այնքան ազդեցություն չէ արած դրականության վերա, այնքան բարի պտուղներ չէ բերած այսպիսի կարճ միջոցում, որքան այդ-բազմադյուն օրագիրը, որ հյուսիսից փայլելով, մի ամենևին նոր լույս թափեց մեր կենդանի բարբառի վերա, առաջին և գլխավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու²⁰»։ Նազարյանը և Նալբանդյանը՝ գրական աշխարհաբարի ձևավորման իմաստուն հեղինակները, հայ ընթերցողին ավետում էին մեր իրականության մեջ կատարված պատմական մեծ երևույթի ծնունդը, XIX դ. 60-ական թվականների լուսավորական շարժման ամենանշանակալից ձեռքբերումը։

«Հյուսիսափայլի» ուղղության հարցը լուսաբանելուց հետո ամսագրի խմբագրությունը անցնում է իր հիմնական խնդրին՝ Փոնդոյանի հոգվածներում արծարծված մեղադրանքների քննությանը։ Ինչպես երևաց վերջինիս հոգվածների համառոտագրությունից, դրանք հիմնականում հետևյալներն էին. հայոց գրական լեզուն իր զարգացումը պետք է ապրի միմիայն բարբառային-խոսակցական լեզվի հիմքի վրա, այն պահպանելու ճանապարհով։ Միանգամայն անընդունելի է առանձին անհատների կողմից լեզվի մշակման կամ նոր լեզու ստեղծելու որևէ փորձ, անթույլատրելի է գրաբարյան լեզվաձևերի օգտագործումը, մինչդեռ թուրք-պարսկական խոսակցական լեզուների տարրերը, որոնք մտել են հայ բարբառների մեջ, պետք է պահպանվեն։

Շատ հետաքրքրական է, որ այս «նամակում» մեծ տեղ է տրվել նաև Մսերյանների լեզվական քաղաքականությանը, որը շփման եզրեր չունեի Փոնդոյանի հարցադրումների հետ։ Սակայն, Փոնդոյանին և Մսերյանին ինչ-որ չափով միացնելով մեկ հարկի տակ, հոգվածագիրները երկու խնդիր էին լուծում։ Նրանք նախ պաշտպանության տակ էին առնում աշխարհաբարը՝ Մսերյանների հարվածներից և միաժամանակ պաշտպանում գրաբարի իրավունքները՝ բարբառայնության նվիրյալների հարձակումներից։ Բանն այն էր, որ Մսերյանը 1856 թ. գրաբարով տպագրելով «Յիշատակարան լազարեանց տոհմի» գիրքը, դրա առաջաբանում հայտարարում էր, թե անարժան է համարել այն գրել աշխարհաբար, որովհետև «որչափ համեղական և ազդոյ և գեղեցիկ առա-

¹⁹ Եթե «նամակի» բուն բնագիրը զբաղեցնում է հասարակ շարվածքի 253 տողը, ապա Նազարյանի ծանոթագրությունները, շարված պետիտով՝ 234 տող։ Մեքենագրված տողերի հաշվարկով նամակի բնագիրը զբաղեցնում է միայն 233 տող, այնինչ, Նազարյանի տողատակի ծանոթագրությունների տողերի բանակը հասնում է 285-ի։

²⁰ Հյուսիսափայլ, 1860, № 11, էջ 384։

ջինն է, այնչափ անհամ է վերջինն, թույլ, տգեղ, անհեթեթ և զուրկ միանգամայն ի կարի կարևորացն կանոնաց ուղղախօսութեան: Հակադրվելով այս տեսակետին, Նալբանդյան-Վարշամյանցը յուրովի հրամայում է Փոնդոյանի ղեկավար այն միտքը, թե յուրաքանչյուր մտածող և ընթերցող հայ ոչ միայն աշխարհիկ լեզուն չի համարում անհամ, թույլ, տգեղ և անհեթեթ, այլև «այն կարող է փոխ տալ մեռած գրարարին և՛ համ, և՛ ազդուություն, և՛ գեղեցկություն և՛ ուղղախօսության կարի կարևոր կանոններ: ...Մեր խոսքին հավատարմ համար,— շարունակում է Նալբանդյանը,— խնդրում ենք պատվելի մադիստրոսից յուր խրթին հայկաբանության բարձրությունից մի փոքր ցած իջանել և առանց կանխակալ դատողության, մտադրությամբ կարգալիս. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպը և մեր այժմյան օրագիրները»²¹:

Ստեփանոս Նազարյանը տողատակում, արդեն իր կողմից, մերժում է և՛ Սսերյանների, և՛ կարծեցյալ Վարշամյանցի (այն է՝ Փոնդոյանի) տեսակետները: Նա ցավ է հայտնում, «որ ստիպված է ասել երկու կողմերին ևս, թե շեղված են ճշմարտության ճանապարհից, հառաջ բերելով մինը բարեմտաբար և մյուսը, անիմաստաբար խոսք ու զրույց, որ ոչինչ արժեք չունին գիտության դատաստանի առաջև»: Ղեկավարվելով միմիայն գիտական սկզբունքներով, նա հայտարարում է, որ հայոց աշխարհաբար լեզուն, առանց որևիցե մշակության չի կարող մեռած գրաբարին տալ գեղեցկություն և ուղղախօսության շատ հարկավոր կանոններ: Ավելին, նա խոստովանում է, որ մերժում է նաև «այն ուսմկախոսությունը, որի վերա հիմնած է մեր շատ սիրելի հիշատակի բարեկամ Ապովյանի «Վերք Հայաստանի» դիրքը: Մենք չենք խոսում այստեղ դորա մեծ խորհրդավոր բովանդակության վերա»,— միաժամանակ ավելացնում է նա: Նազարյանը գտնում է, որ «ոչինչ համեմատություն չկա գրոց, կարելի է ասել տասն դար մշակված լեզվի և այժմուս աշխարհաբարի մեջ, եթե առնունք դորան լուկ այնպես, ինչպես որ կենդանի է անկիրթ ռամկի բերանում, առանց որևիցե դպրութենական մշակության: Այդտեղ գրոց լեզուն, թե շատ և թե փոքր մշակված մեր հին հեղինակների ձեռքով, երևում է մի պերճ թագավոր, և աշխարհաբարը, ինչպես նա գործ է ածվում բուն ռամկի բերանում, հազիվ թե արժանի նորոք համբուրելու: Նա հայտնում է նաև, որ այս չի նշանակում, թե ինքը պաշտպանում է հին լեզվի իրավունքը, «ոտնակոխ առնելով աշխարհաբարը»: Ընդհակառակը, շեշտում է, որ իր ողջ գործունեության ընթացքում ինքն ապացուցել է, որ «ոչ մի հայ մեր օրերում ալնքան բազմամասնյա հանդես տված չէր այդ աշխարհաբարին, ինչքան մեք, «Հյուսիսափայլի» հրատարակողը»²²: Այսուհանդերձ, ինչպես Մսերը, Նազարյանը նույնպես գրտնում էր, որ աշխարհիկ լեզուն անկանոն է և թույլ, ինչպիսին է և բազմությունը, «ուրեմն և անհնարին՝ մատենագրել այդ լեզվով ազգի դաստիարակության և լուսավորության համար»: Փոնդոյանին պատասխանելով Մսերյանի հարցադրման միջոցով, Նազարյանը գտնում է, որ ժամանակի անհետաձգելի պահանջն է ոչ թե ձեռք մեկնել «մեր հին օրերի մեռած գրախոս լեզվին», որը ոչինչ հարակցություն չունի ազգի ներկա կյանքի հետ, այլ ժամանակի մեծ և կարևոր խնդիրն է համարում, «որ հրաժարվելով բազմության վայրենացած լեզվից, մշակվի փոքրիշատե մաքուր մնացած և քաղաքացի հասարականության մեջ գործածական աշխարհաբարը, որ դորանով այժմյան սերունդը ստանա մի հարմարավոր գործի կրթության և լուսավորության»:

Ինչ վերաբերում է Փոնդոյանի այն մեղադրանքին, թե Նազարյան-գործիչը և կամ մի որևէ անհատ իրավունք չունեն նոր լեզու ստեղծելու, կամ մշակելու, ապա Նազարյանը կրկին մեկնաբանում է գրական աշխարհաբարի մշակման անհրաժեշտությունն ու իր տեսակետն այդ մասին, հերքելով միանգամայն նոր լեզու ստեղծելու իր՝ կարծեցյալ հավակնությունը:

²¹ Հյուսիսափայլ, 1860, № 11, էջ 389:

²² Նազարյանի ծանոթագրություններից վերցված քաղվածքները տե՛ս Հյուսիսափայլ, 1860, № 11, էջ 389—394:

Նա սխալ դատադուրջումն է անվանում այն միտքը, թե քանի որ ժողովրդական լեզուն մշակագործվելով կորցնում է իր ազգային հարազատությունը, ուրեմն «պիտո է ամենևին անմշակ մնար, որ պահպաներ յուր ազգայնությունը»: «Զէ.— առարկում է նազարյանը,— մատենագիրը կարող է միայն մշակել, կանոնել, գեղեցկացնել, ճոխացնել մի արդեն տված նյութ լեզվի, բայց նա չունի իրավունք լեզուն փոփոխել. և այդ բանը արած չեն մեր հայոց հեղինակքը»²³:

Ստեփանոս Նազարյանն իր մեծարժեք ծանոթագրություններում ուշադրություն է հրավիրում նաև այն իրողության վրա, որ լեզուն և մատենագրությունը, «այս երկու մեծ հայելի պատկերքը ազգային կյանքի», գտնվում են մշտական փոփոխության մեջ, ուստի և, բնականաբար, նոր կյանքը պահանջում է նոր կարգ, նոր օրենք, նոր լեզու, նոր մատենագրություն: Ահա թե ինչու, «միտդնելով նոր Եվրոպայի մատենագրության ընթացքին», ըստ որի ամենայն ազգի նորոգ շինության համար օգտագործվում են շատ նյութեր հնության միջից, «այդպես է ընթացել և միշտ «Հյուսիսսահայլի» հրատարակողը»: Նա դարձյալ Փոնդոյանին էր պատասխանում, բացատրելով, որ իր կողմից «հին լեզվի բոլոր պատվական նյութը գործ են դրված նոր աշխարհաբարի մեջ, հետևելով լեզվի ընդհանուր լոգիկային և դուրս ձգելով ռամկական տաճիկ ձևերը խոսակցության, որ մտել են հայերի մեջ իբրև մի տխուր ժառանգություն տաճկական իշխանության»²⁴:

Միքայել Նալբանդյանն իր հերթին, իբրև նամակագիր, մերժում է Մսերյանների որդեգրած «աշխարհաբարը», անուղղակիորեն պատասխանում Փոնդոյանի հարցադրումներին: Եթե գրաբարով գրող հեղինակների համար անհամեմատ հեշտ է հարազատ մնալ գրաբարի հին, քարացած ձևերին, գրում է նա, ապա շատ ավելի դժվար է գրել «անդադար շարժողության մեջ գտնվող» կենդանի ժողովրդի լեզվով: Փուլթ չէ, որ աշխարհաբար լեզվի կանոնները դեռևս տպագրված չեն «Քերականություն» անունով գրքի մեջ, որն ազգային գրականության վերջին խնդիրներից է: Սակայն կրթված և մտածող հեղինակները իրենց գիտելիքների և նուրբ ճաշակի շնորհիվ կարող են հարդարել և կոկել «անգրագետ ժողովրդի ավերած ու տգեղացրած նյութը լեզվի»: Այս իմաստով նրկատի առնելով Մսերյանների «Ծռաքաղի» աշխարհաբար կարծված «ինքնահնար ու անկանոն լեզուն», Նալբանդյանն անուղղակիորեն, բայց բառացի, բնականաբար առանց անվան հիշատակության, մեջ է բերում Փոնդոյանի մի ասույթը, որը նա կրկնում է իր հողվածներում: «Եթե մի քանի հալք,— գրում է Նալբանդյանը,— հանիրավի համարում են «Հյուսիսսահայլը» աշխարհաբար լեզվի խանգարիչ, այդ օրենքով ո՞րչափ ևս առավել «Ծռաքաղը» պիտի համարվի և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի ավերիչ»²⁵:

Կարծում ենք, Վարչամյանցի «Նամակի» հրապարակումն այն վճռական դերն է կատարում, որ Փոնդոյանը վերջնականապես համոզվելով Նազարյանգիտնականի հարցադրումների ճշմարտացիության մեջ, այլև հասկանալով նրա ազնիվ պահվածքի խորհուրդը, աննպատակահարմար է գտնում շարունակել վեճը նրա հետ և այս պայթարում իր դերն ավարտված համարելով, թողնում է բանավեճի ասպարեզը²⁶:

Հովսեփ Փոնդոյանի խոհեմությունը, սակայն, քիչ է օգնում Նազարյանին: Հետագայում նույնպես, աննահանջ ու համառորեն շարունակում էին գործել

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 395:

²⁶ Ուշադրության արժանի է նաև Վարչամյանցի «Նամակի» դասական ասույթ-ընթերցանը՝ «Պատուր բարեկամս է, բայց է՛ր ավելի մեծ բարեկամս է ճշմարտությունը»: Այս բնաբանը, որն ամենայն իրավամբ կարելի է հողվածի հիմնական բաժնի՝ ենթատեքստի վերնագիրը համարել. անշուշտ, ուղղված էր մի մարդու, որին հարգելով հանդերձ, խմբագրությունը հակադրված էր ցավ պատճառել նրան:

նրա հակառակորդները, որոնց հոգվածներն ու վտանգավոր սաղընքները տապալում են ոչ միայն նազարյանի լուսավորական որոշ ձեռնարկումները, այլև նյութապես ու բարոյապես դժվարացնում նրա խմբագրական աշխատանքը:

Նալբանդյանի ձերբակալությունից հետո մենակ և անօգնական նազարյանը 1863 թ. ժամանակավորապես ընդհատում է «Հյուսիսափայլի» հրատարակությունը: 1864 թ. նա թեև կարողանում է շարունակել ամսագրի տպագրությունը, բայց 1865-ին, այնուամենայնիվ, հարկադրված դադարեցնում է լրագրական գործունեությունը:

Ինչ վերաբերում է Վարշամյանցի «Նամակին», ապա այն մնում է նազարյանի խմբագրական-հրապարակախոսական գործունեության բացառիկ հետաքրքրական էջերից մեկը, պրոֆեսիոնալ լրագրողի ինքնատիպ մի հնարանը, որն այսօր իսկ կարող է զարմանք ու հիացում պատճառել հայ լրագրության մասնագետներին:

ЕЩЕ ОДНА ПОПЫТКА РАСКРЫТИЯ ЛИТЕРАТУРНОГО ПСЕВДОНИМА

М. А. МХИТАРЯН

Резюме

В статье обсуждается вопрос авторства «Письма» С. Варшамянца, опубликованного в журнале «Юсисапайл» (1860, № 11). Еще в 1860 г. журналистами Мсерянами (отец и сын) авторство «Письма» было приписано М. Налбандяну.

В 1948 г. при подготовке к изданию собрания сочинений М. Налбандяна фамилия С. Варшамянц была принята в качестве псевдонима М. Налбандяна, и «Письмо» было внесено во II том собр. сочинений. Согласно Р. Нанумян, автором «Письма» является С. Варшамянц. В одной из наших статей, опубликованных еще в 1981 г., было высказано предположение о том, что авторами «Письма» являются С. Назарян и М. Налбандян. Остается подтвердить правоту нашего предположения и добавить, что «Письмо» фактически было ответом педагогу-журналисту Овсепу Пондоюну, полемические статьи которого под разными псевдонимами публиковались на страницах газеты «Мегу Айастани».